

Առաջին Համաշխարհային Պատերազմից հետո մեծ փոփոխություններ տեղի ունեցան Հունգարիայի հայության կյանքում:

Տրիանոնի պայմանագրի կնքումից հետո հարևան պետություններից մեծ քանակով հայեր /մոտ 1500-2000 հոգի/ տեղափոխվեցին Բուդապեշտ:

Համաձայն վաղեմի հայկական սովորույթների՝ ցանկություն ունեին նոր բնակավայրում ևս պահպանել ազգային եկեղեցական ծեսերը և սովորույթները: Հայերը միշտ էլ հավատարիմ են մնացել իրենց քրիստոնեական հավատքին:



Հայ կաթողիկե համայնքը կազմավորվել է XVII դարում՝ որպես ինքնուրույն եկեղեցի: Հռոմը ճանաչում է հայ կաթողիկե եկեղեցու ինքնուրույնությունը վերապահելով միայն Հռոմի Պապի՝ ընտրված Հայ Կաթողիկե Պատրիարքի պաշտոնական ճանաչման արտակարգ իրավունքը: Պատարագն ընդունված է մատուցել հայերեն լեզվով:

Բուդապեշտի հայությունը Տրիանոնի պայմանագրի հետևանքով կորցրեց եկեղեցական իրավական կապերը Թրանսիլվանիայի հայ կաթողիկե համայնքի հետ: Այդ ժամանակ Հունգարիայում հայկական եկեղեցի գոյություն չուներ, իսկ Բուդապեշտի հայությունը ծուլվել էր տեղական կաթողիկե համայնքի հետ:

Առաջինն այս հարցը փորձեց բարձացնել Բուդապեշտի մարզային քրեական դատարանի նախագահ Ֆելիքս Ավեդիկը, ով հենց իր կողմից հիմնադրված «Հունգարիայի Հայերի Միության» ժողովի ժամանակ առաջարկեց հիմնադրել հայկական եկեղեցի: Իր առաջարկում նա գրել էր, որ Բուդապեշտում բոլոր ծեսերի ներկայացուցիչներն ունեն իրենց հոգեվոր

հայրերը, և միայն մենք՝ հայերս, ինչպես խորթ զավակներ, զրկված ենք մեր հավատացյալ ոգուն մեր հնագույն, վեհ, սուրբ պատարագը մատուցելու հնարավորությունից»:

Վիեննայի Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս, Ծայրագույն աբբահայր Պ. Գովրիկ Գերգեյը ևս հովա-նավորեց Հայ Կաթողիկե Ծխական Համայնքի ստեղծումը, սակայն այն ժամանակ չկարողացավ իմի բերել այս հարցը:

Կազմակերպիչները՝ Ազոշտոն Գեզան, Ֆելիքս Ավեդիկը, Գոպչա Լասլոն և Շիմայի Ջյուլան նույն խնդրանքով դիմեցին Վենետիկի Մխիթարյան միաբաններին:

1922-ին Հունգարիայի կաթողիկե եկեղեցու ղեկավար արքեպիսկոպոս Չերնոխ Յանոշը թույլատրեց Մխիթարյան միաբանության ներկայացուցչությունը և ինքնուրույն կաթողիկե եկեղեցիական համայնքի ստեղծումը Հունգարիայում: 1924 թվականին Բուդապեշտ եկավ հայ առաջին կաթողիկե քահանա Տիրոյան Աթանասը:

Նույնը փաստում է այն ժամանակներից մեզ հասած և Բուդապեշտի Արքեպիսկոպոսի տեղապահի դիվանում պահպանվող 1015 համարի տակ գտնվող վավերագիրը, որում նշվում է, որ Աթանաս Տիրոյանը, Վենետիկի մխիթարյան քահանան, Հռոմի Առաքելական Սբ. Աթոռից ստացված հավաստագրով ժամանեց Հունգարիա՝ պատասխանելու հայ կաթողիկե հավատացյալների հոգևոր պահանջներին: Արքեպիսկոպոսի Բուդապեշտի տեղապահ Յանոշ Մեսարոշը սեփական ստորագրությամբ ճանաչել և առաջարկել է աջակցություն ցուցաբերել հոգևոր հորը:

Տիրոյան Աթանասը ներգաղթած հայերին ծանոթ էր, քանի որ երկար տարիներ հոգևոր ծառայություն էր մատուցել Տրանսիլվանիայի Երժիբետպոլիսում և ազատ խոսում էր հունգարերեն:

Առաջին կաթողիկե ժամատունը գտնվում էր Բուդապեշտի Ռադայի փողոց, 11-13 շենքում: 1926 թվականին վարդապետը հիվանդացավ, վերադարձավ Վենետիկ և 1927-ին հանկարծամահ եղավ: Մինչև 1929 թվականը ծխական համայնքը մնաց առանց հոգվոր հովվի:

1930թ-ին Վենետիկի Մխիթարյան միաբանությունը Բուդապեշտ ուղարկեց Տիրոյան Աթանասի եղբորը Տիրոյան Հակոբին, ով ևս երկար տարիներ գործել էր Երժիբետպոլիսում: 1930 թ. հոկտեմբերին Բուդապեշտի Անդրաշ 52 հասցեում սկսեց գործել երկրորդ բնակարան- ժամատունը: Կազմակերպչական աշխատանքները շարունակվեցին: Բուդապեշտի Հայ կաթողիկե ծխային համայնքը կազմավորվեց 1932 թվականին Հունգարիայի արքեպիսկոպոսի հովանավորությամբ:

Ծխական խորհուրդի նախագահ ընտրվեց վճռաբեկ դատարանի փոխնախագահ Շիմայի Ջյուլան, փոխնախագահ, մշակույթի պետքարտուղար Գոպչայի Լասլոն և մայրաքաղաքի խնամակալական խորհուրդի նախագահ Ազոշտոնի Գեզան, որպես խնամակալ Ֆելիքս Ավեդիկին՝ Բուդապեշտի մարզային քրեական դատարանի նախագահին:

Հայ Կաթողիկե ծխական համայնքի կազմի և գործունեության կարգն ամենաբարձր մակարդակով հովանավորություն ստացավ: Սակայն ծխական գրասենյակը չէր կարող լիովին գործել, քանի որ վարդապետը չէր տիրապետում լիազոր իրավունքների, ինչի ձեռքբերումը կախված էր բարձրագույն եկեղեցական ղեկավարությունից և ծխական համայնքի քաղաքական և տնտեսական ունակություններից: Այսինքն համայնքը սեփական տնտեսական միջոցներով պետք է կարողանար հոգալ ժամատան, քահանաի և այլ ծախսերի բավարարման մասին:

Հակոբ Տիրոյանին երկար վատառողջության ժամանակ իրեն փոխարինում էր Վենետիկի մխիթարյան աբբահայրը Պ. Վարդանեսյանը:

1933 հուլիսին Հակոբ Տիրոյանը վախճանվեց և հողարկվեց բուդապեշտի Կյոբանյայի գերեզմանատանը, ինչի խնամքն ամբողջովին իր վրա կրեց Դանիել Կադար Վարդապետը:

Ծխական համայնքը նորից մնաց առանց հովվի, և ժամատան դռները նորից փակվեցին: 1935 թվականին ծխական խորհուրդը դիմեց Վիեննայի Մխիթարյան Միաբանությանը. Միա-բանության ղեկավար Արքեպիսկոպոս ծայրագույն աբբահայր Մեսրոբ Հաբոգյանը Բուդապեշտի Ծխական Համայնքի ղեկավարությունը հանձնեց դոկտոր Վրթանես Անտալ Պունգուցին, ինչի համար հովանավորություն խնդրեց Հռոմից: Հռոմի XI. Պիուս Պապը հովանավորեց այս քայլը:

Հունգարիայի եկեղեցու ղեկավար Էստերգոմի արքեպիսկոպոս դոկտոր Շերեդի Յուստինյանը 36 համարի կարգադրանքով 1935 հունվարի 3-ին, ըստ Հռոմից ստացված համաձայնության՝ թույլատրեց Վիեննայի Մխիթարյան միաբանության ներկայացուցչի Բուդապեշտում գործունեությունը: Այդ ժամանակ ծխական համայնքը Բուդապեշտում չէր գործում: Սբ. պատարագը մատուցվում էր Վացի փողոցում գտնվող Անգուլիշաստնյոկ եկեղեցում, այնուհետև Բագիլիկայի Լիպոտ եկեղեցում:

Ծխական խորհրդի կանոնադրությունը փոխվեց համաձայն եկեղեցական օրենքի: Փոփոխված կանոնադրությունը ղեկավարությունը ընդունեց 1937թ. մարտի 7-ին: Սրանով հնարավորություն ստեղծվեց հավաքել հավատացյալներին և ծաղկեցնել հայ կաթողիկե ծխական համայնքը: Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ հայ կաթողիկե ծխական համայնքը գործում էր Բուդապեշտի V շրջանի, Վադաս 9 հասցեում գտնվող տանը:

Հայր Վրթանես Անտալ Պունգուցը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց հետապնդվող հրեաների փրկության գործում, ինչի արդյունքում գեստապոն ձեռքակալեց: Ազատվելուց հետո ստիպված եղավ թաքնվել: Պատերազմից հետո հոգևոր հորը Վելենից Բուդապեշտ բերեցին սովետական հայ զինվորները:

1943 թվականին Հայր Սուրբ Դանիել Կադարն ուղևորվեց Բուդապեշտ: Ի սկզբանե հայր Դանիելը պետք է մեկներ Բուդապեշտի Պլովդիվ քաղաք, սակայն վերջինս լինելով Հունգարիայի քաղաքացի մեկնելու թույլտվություն պետք է ստանար Հունգարիայում: Նույն ժամանակ Հունգարիան գրավեցին գերմա-նական զորքերը և հայր Դանիելը չկարողացավ ստանալ անհրաժեշտ թույլտվությունը և մնաց Բուդապեշտում՝ ծառայելով Հայր Վրթանես Անտալ Պունգուցի մոտ որպես օգնական, ինչպես նաև ապրուստ վաստակելու նպա-տակով դասավանդում էր «Քրիստոնյա հավատքի հիմքերը» առարկան:

Հայր Դանիելը ծնվել է 1916 թ. նոյեմբերի 25-ին պատմական Հունգարիայի տարածքում՝ Տրանսիլվանիայի Ղեշակնա գյուղում: Հայրը՝ Կադար Յոժեֆը, աշխատում էր հանքում, մայրը՝ Զամորի Ռեբեկան, տնային տնտեսուհի էր, քանի որ Դանիելն ուներ ևս հինգ քույր և եղբայր՝ Բելան, Յոժեֆը, Մարիան, Լուիզան և Գիզելլան: Հայրը վախճանվեց 1929 թվականին թողնելով՝ վեց որբ երեխաներին: Դանիելը 14 տարեկան հասակում հայտնվեց Վիեննայի Մխիթարյան վանքում: 1936-ին վանականի երդում տվեց, իսկ 1940-ին ձեռնադրվեց:

1943-ին ղեկավարությունը ուղարկեց Պլովդիվ՝ այնտեղի ներկայացուցչության դպրոցում դասավանդելու նպատակով: Պատերազմական վիճակի պատճառով չկարողացավ իրականաց-նել պահանջը:

1944-ին Հայր Վրթանես Անտալ Պունգուցը դիմեց միաբանության ղեկավարին ծայրագույն աբբահայր դոկտոր Մեսրոպ Հաբոգյանին խնդրանքով Հայր Դանիելին նշանակել Բուդապեշտում: Քանի որ ազատ տիրապետում էր լեզվին, կիրակի օրերին ռումիներեն լեզվով պատարագ էր մատուցում աշխատանքային ճամբարում:

Հայ հավատացյալների համար պատարագ էր մատուցում Բագիլիկայի մի մասում, սակայն Բագիլիկայի քահանանյին դա մեծ ուրախություն չէր պատճառում և նա մեծ ուրախությամբ կարգելեր այս ամենը: Վերջինս նույնիսկ ամեն միջոցով խոչնդոտում էր այն բանին, որ հայ

համայնքը Անդրաշի փողոցի տունը վարձելու հնարավորություն ձեռք բերի:
 1946թ. օգոստոսի 13-ին վախճանվեց Հայր Վրթանես Անտալ Պունգուցը:
 Հայր Վրթանեսի մահից հետո ծագեցին նոր իրավական հարցեր, որոնք սպառնում էին հայ ծխական համայնքի գոյության պահպանը:
 Այն ժամանակվա հունգարական եկեղեցու ղեկավար Արքեպիսկոպոս Յոզեֆ Մինդսենտին առանձին կարգադրությամբ ապահովեց հայ կաթողիկե համայնքի պահպանումը:
 Պատերազմական գործողությունների հետե-վանքով ռմբակոծվեց Վադաս փողոցի շենքը, որտեղ գտնվում էր հայկական ժամատունը:
 Ամենը ոչնչացվեց: Հայերը ապաստան գտան Կոմս Տելեկի Պալ 8 հասցեում:
 Պատերազմից հետո Հայր Դանիելը քահանայական պարտականությունների հետ մեկտեղ դասավանդում էր նաև հավատացյալներին: Կյոբանիայի բանտում, Բուդաորշի և Կիշտարչայի ռազմական գերիների ճամբարներում պատարագ էր մատուցում հավատացյալներին: Ապրուստի հնարավորությունները շատ ծանր էին, նա ոչ մի տեսակի նպաստ չէր ստանում, իսկ դպրոցում հավատքի դասավանդման արգելումից հետո զրկվեց նաև այս վերջին աղբյուրից:
 1949 թ. վերանորոգված Կոմս Տելեկի Պալ 8 հասցեում գտնվող ժամատունը սեփականացրեց հարևան գործարանը: Հայ հավատացյալները կրկին ստիպված էին ապաստարան որոնել:
 Մեծ դժվարություններով հայր Դանիելը կարողացավ վարձակալել Բուդապեշտի V. շրջանում գտնվող Սենելվեյս 9 հասցեում մի բնակարան, և բոլոր տեսակի թույլտվությունները ստանալուց հետո վերածեծ այն մի փոքր հայկական ժամատան: Սակայն 1970 թվականին հայերը զրկվեցին այս հնարավորությունից ևս, քանի որ այս տարածքն էլ պետականացրեցին:
 1974 մայիսի 14-ին համայնքը ստիպված եղավ հանձնել պետությանը այս ապաստարանը ևս:
 1970-ին Պետական Եկեղեցական Գործերով զբաղվող Գործակալության նախագահ, պետքարտուղար Յոզեֆ Պրանտները ստորագրեց թույլտվություն, ըստ որի՝ հայ ծխական համայնքը կարող էր զբաղեցնել Օրլաի 6 հասցեում գտնվող շենքը:
 Օրլայի 6 հասցեում կառուցվեց Հունգարիայի տարածքում գործող միակ հայկական եկեղեցին: